



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 3 » ցեկվանյուկի 2021 թ.

No 529

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ
4140531 ԱԿՏՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ վարչական դատարանում քննվում է թիվ ՎԴ/6050/05/21 վարչական գործն ըստ հայցի «Զորախաչ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 00821485/ ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ ՊԵԿ 08.04.2021 թվականի թիվ 4140531 ակտն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ:

Ակտի կայացման հիմքում դրվել է «Զորախաչ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ կառավարության 03.12.2020 թվականի թիվ 1976-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների 16-րդ կետի պահանջը խախտելու հանգամանքը: Խախտման փաստն արձանագրելուց անմիջապես հետո՝ մինչ 08.04.2021 թվականի թիվ 4140531 ակտի կայացումը՝ 04.03.2021 թվականին, Ընկերության կողմից կատարվել են խախտումը վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ, այսինքն՝ նշված ամսաթվից սկսած տպագրվող բոլոր ՀԴՄ կտրոններում արտացոլված են ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը:

ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը 25.01.2019թ. թիվ 6/12 որոշմամբ, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ նախագահը 18.06.2020թ. թիվ 101, 19.08.2020թ. թիվ 132, 19.08.2020թ. թիվ 133, 03.02.2021թ. թիվ 69 որոշումներով նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործերով անվավեր են ճանաչել վիճարկվող ակտերը՝ նկատի ունենալով, որ ՀԴՄ մուտքագրված գումարներն




արտացոլվել են Ընկերությունների ֆիսկալային հասույթում, ինչպես նաև գնումից հետո Ընկերությունների կողմից կատարվել են համապատասխան գործողություններ, ինչի արդյունքում տրամադրվող ՀԴՄ կտրոններում արտացոլվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր վավերապայմանները:

Հիմք ընդունելով նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործերով ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ նախագահի որոշումները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2-րդ մասով, 67-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի ապրիլի 8-ի թիվ 4140531 ակտը:
2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատիրոջը իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում:

12/3/2021

X 

ՌՈՒՍԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

